## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

### «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «26» «հոկտեմբերի» 2021թ.

ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Այդինյան, Գ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Զոհրաբյան

### 1.Տեղեկություն «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

1.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը |
|---|---|---|
| 1. | օդորակիչ | 420 000 |
| 2. | օդորակիչ | 1 600 000 |
| 3. | օդորակիչ | 400 000 |
| 4. | չիրկիզվող պահարաններ | 300 000 |

### 2. Տեղեկություն «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը eauction.armeps.am համակարգում բացվել է 2021 թվականի հոկտեմբերի 22-ին, ժամը 11:30-ին:

2.2. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը eauction.armeps.am համակարգում սկսվել է 2021 թվականի հոկտեմբերի 25-ին, ժամը 11:30-ին:

### 3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

| Մասնակցի անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցե | ՀՎՀՀ | Հեռախոսահամար |
|---|---|---|---|
| Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» | Hovhannisyan8118@gmail.com | 20179887 | 077 47 40 06 |
| «Բարսիս» ՍՊԸ | spartak_tsatinyan@barsisgroup.am | 02230504 | 055 44 88 15 |

### 4. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ

4.1. Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

### 5. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

5.1. Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5.2. «Բարսիս» ՍՊ ընկերության կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում բացակայում է գլխամասում գրված՝ «Հավելված N 1.2 ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի» գրառումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

### 6. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

---

(Ա.Մխիթարյան)

6.1. Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ի և «Բարսիս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

### 7. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

---

(Ա.Մխիթարյան)

7.1. Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի»-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

7.2. «Բարսիս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված է հրավերի պայմաններին անհամապատասխան՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում բացակայում է գլխամասում գրված՝ «Հավելված N 1.2 ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի» գրառումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

### 8. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

---

(Ա.Մխիթարյան)

աղյուսակ

| հ/հ | Գնման առարկայի անվանումը | Մասնակիցների | | Նախնական գնի առաջարկ | | Վերջնական գնի առաջարկ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | զբաղեցրած տեղը և մերժված գնային առաջարկը | անվանումը | Գինը առանց ԱԱՀ | Գինը | Գինը առանց ԱԱՀ | Գինը |
| 1 | օդորակիչ | մերժված | Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» | 555555 | 555555 | 555555 | 555555 |
| | | մերժված | «Բարսիս» ՍՊԸ | 595000 | 714000 | 595000 | 714000 |
| 2 | օդորակիչ | 1 | «Բարսիս» ՍՊԸ | 1050000 | 1260000 | 1050000 | 1260000 |
| | | մերժված | Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» | 1755555 | 1755555 | 1755555 | 1755555 |
| 3 | օդորակիչ | 1 | «Բարսիս» ՍՊԸ | 260000 | 312000 | 260000 | 312000 |
| | | մերժված | Ա/Ձ «Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի» | 444444 | 444444 | 444444 | 444444 |
| 4 | չիրկիզվող պահարաններ | - | - | - | - | - | - |

### 9. Տեղեկատվություն՝ գնման առարկայի բնութագրերի օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների մասին

9.1. Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ չեն ստացվել:

### 10. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի մասին

10.1. «Բարսիս» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ՝ ներկայացված տեխնիկական բնութագրերում ենթակա են հստակեցման հետևյալ բնութագրիչները՝

10.1.1 չափաբաժին 2-ում՝ «նախատեսված է 150 մ³ և ավելի տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար», «թույլատրելի շեղումները 10 տոկոս» պահանջները,

10.1.2 չափաբաժին 3-ում՝ «նախատեսված է 180 մ$^3$ և ավելի տարածքում ջերմաստիճանի ավտոմատ կարգավորման համար», «թույլատրելի շեղումները 10 տոկոս» պահանջները:

## 11. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

11.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

## 12. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

12.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի մասնակիցների ներկայացված գնային առաջարկի արդյունքում մասնակիցների զբաղեցրած տեղերը ըստ աղյուսակի:

12.2. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի մասնակիցների մերժված գնային առաջարկների մասին ըստ աղյուսակի: Մասնակիցների ներկայացված գնային առաջարկները մերժվել են համակարգի կողմից, քանի որ հակադարձ աճուրդում գնային առաջարկները գերազանցել են նախահաշվային գները:

## 13.Հանձնաժողովը որոշեց՝

---------------------------------------------------------------------------------

(Ա.Մխիթարյան)

13.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն չափաբաժին 1-ով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

13.2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն չափաբաժին 4-ով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

13.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8.11 կետը՝ «Բարսիս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի անհամապատասխանությունը շտկելու նպատակով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը:

13.4. Հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով և համակարգի միջոցով տեղեկացնել «Բարսիս» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը և համակարգի միջոցով, մինչև 2021 թվականի հոկտեմբերի 26-ը ժամը 18:00, ներկայացնել Հավելված N 1.2-ը իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ գլխամասում գրված՝ «Հավելված N 1.2 ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի» գրառումը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը շտկված:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

## 14.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

---------------------------------------------------------------------------------

(Ա.Մխիթարյան)

14.1. «ՇՄՆ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել 2021 թվականի հոկտեմբերի 27-ին, ժամը 16:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարական տուն 3, 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

## 15.Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ ______________________ Ա.Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________________ Մ.Այդինյան

______________________ Գ.Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Լ.Զոհրաբյան